



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ՅՅՆՅՈՒ
ՆԱԺՐՈՒՅՎՈՒՄՆ ԵՎ ԲՆԱԿԱՆԱՑՄԱՆ
ՆՊՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ



ՆԱԺՐՈՒՅՎՈՒՄՆ ԵՎ ԲՆԱԿԱՆԱՑՄԱՆ
ՆՊՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՆՏԱՅՎՈՒՄՆ ԵՎ ՆՊՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովի` ընտրողների գրացումն իրականացնող անդամի գործառույթները (Ընտրական օրենսգիրք` հոդված 65)

- Ընտրողին խնդրեք ներկայացնել.
 - ✓ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը,
 - ✓ հարկադրաբար վերաբնակեցված անձի` տարիանվածի, դեպքում` տարիանվածի վկայականը` Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականի կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի հետ:
- Ստուգե՛ք, թե ընդգրկված է արդյոք ընտրողը ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակի մեջ, և համեմատե՛ք ընտրողի անձնական համարը ընտրողների ցուցակում առկա համարի հետ:
- Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում առկա ընտրողի հաշվառման տվյալների և ընտրողների ցուցակում ընդգրկված տվյալների համապատասխանությունը:
- Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում և ընտրողների ցուցակում առկա լուսանկարների և ընտրողի դեմքի իրար հետ համապատասխանությունը:
- Եթե ընտրողն ընդգրկված է ընտրողների ցուցակի մեջ, ընտրողին արե՛ք նշմարում աջ ձեռքի բթամատի կամ ցուցամատի վրա:
- Վավերացրե՛ք ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները (դարձերեսին, դրա համար հատկացված տեղում) գրանցումն իրականացնողի կնիքով:
- Ստորագրե՛ք ընտրական քվեաթերթիկի/քվեաթերթիկների ետին էջում:
- Ընտրողների ցուցակում ստորագրությամբ հավաստե՛ք ընտրական քվեաթերթիկի/քվեաթերթիկների հատկացումը:
- Խնդրե՛ք ընտրողին, ընտրողների ցուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հավաստել ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալը:
- Ընտրողին փոխանցե՛ք Ձեր կողմից ստորագրված և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- Ուղղորդե՛ք ընտրողին դեպի քվեախցիկ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Եթե ընտրողը չներկայացնի Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայական, Վրաստանի քաղաքացու անձնագիր, հարկադրաբար վերաբնակեցված անձի` տարիանվածի, վկայական` Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականի կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի հետ, նրան չպետք է փոխանցեք ընտրական քվեաթերթիկ/ քվեաթերթիկներ:

- Եթե ընտրողների համապատասխան ցուցակում քաղաքացու անձնական համարի, սեռի և լուսանկարի հետ, ամբողջությամբ համապատասխանում է ցուցակում առկա տվյալներից գոնե 3-ը (անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվը, հասցեն), ընտրողը մասնակցում է քվեարկությանը:
- Եթե ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթում կամ ընտրողների ցուցակում տեղ գտած լուսանկարը միմյանց անհամապատասխան եք համարում, տվյալ անհամապատասխանության հարցով դիմե՛ք հանձնաժողովի նախագահին: Եթե հանձնաժողովի նախագահը անհամապատասխանությունը չի հաստատի, իրավունք ունեք գործավարության մատյանում անել գրառում՝ նշելով Ձեր առանձնահատուկ կարծիքը, ինչը հանձնաժողովի քարտուղարի հետ հաստատում եք ստորագրությամբ:
- Եթե ընտրողը հրաժարվում է նշմարումից, նա իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և նրան չպետք է փոխանցեք ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ:
- Եթե չի հաջողվում նշմարում անել ընտրողի աջ ձեռքի բթամատի կամ ցուցամատի վրա, նշմարումն արվում է աջ ձեռքի այլ մատի եղունգի վրա, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նույն կարգով ձախ ձեռքի վրա:
- Այն ընտրողը, որը ֆիզիկական վիճակի, մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով չի կարողանում ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, չի անցնում նշմարման ընթացակարգը: Ընտրողին ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ փոխանցելիս՝ ընտրողների միասնական ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում պետք է անեք «ֆիզիկական վիճակ» գրառումը և հաստատե՛ք ստորագրությամբ:
- Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողին, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ցուցում տրվի, որ ստորագրի նույն սյունակում: Ընտրողների գրանցումն իրականացնողը նշվածի վերաբերյալ պետք է բացատրագիր գրի (ընտրողի անվան և ազգանվան մատնանշմամբ):
- Եթե Դուք կամ ընտրողը վնասեք ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները, այդ մասին անհապաղ տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին և ընտրողին փոխանցե՛ք նոր (Ձեր կողմից ստորագրված և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված) ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ:

Ի նկատի ունեցեք.

- ✓ Երաշխավորվում է, որ ընտրողների գրանցում իրականացնողը ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին և 17:00-ին, առանց քվեարկության գործընթացին խանգարելու, վերահաշվի ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իր կողմից տրված ընտրական քվեաթերթիկների քանակները (հանձնաժողովի նախագահին փոխանցված վնասված քվեաթերթիկների քանակը ներառյալ) և տվյալները տեղեկացնի հանձնաժողովի նախագահին: Եթե տվյալների միջև տարբերություն հայտնաբերվի, ընտրողների գրանցում իրականացնողն անհապաղորեն պետք է բացատրագիր գրի, որը կկցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին:
- ✓ Ընտրողների գրանցում իրականացնողի գործառույթի փոխանցման դեպքում, գրանցողը պարտավոր է կրկին հաշվել ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իր կողմից հատկացված ընտրական քվեաթերթիկների քանակությունները (ներառյալ հանձնաժողովի նախագահին փոխանցված վնասված ընտրական քվեաթերթիկների քանակը) և արդյունքների մասին տեղեկացնել հանձնաժողովի նախագահին: Տվյալների միջև տարբերության հայտնաբերման դեպքում ընտրողների գրանցում իրականացնողը անհապաղորեն պետք է բացատրագիր գրի, որը կկցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին: